| Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | 011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա |
| Ընդհանուր նկարագրությունը | Մագիստրոսի կրթական ծրագիրը կառուցված է հետևյալ հիմնական կրթամասերից՝ «Ընդհանուր կառուցամաս», «Հատուկ մասնագիտական  կառուցամաս», «Առարկաներ ուսանողի ընտրությամբ», «Պրակտիկա», «Գիտահետազոտական աշխատանք»: Ուսման տևողությունը 1 տարի է՝ 2 կիսամյակով: 1-ին կիսամյակը ներառում է 16 շաբաթ, իսկ 2-րդը՝ 12 շաբաթ: Ծրագիրը բազմաբնագավառ է և ապահովում է անհրաժեշտ կոմպետենցիաներ: |
| Ուսումնական պլանը | https://tinyurl.com/2bwur6ck |
| Շնորհվող աստիճանը | Մանկավարժության մագիստրոս |
| ՈԱՇ մակարդակը | Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ |
| Կրեդիտները | 60 |
| Ուսուցման ձևը | Առկա |
| Ծրագրի տևողությունը | 1 տարի |
| Դասավանդման լեզուն | Հայերեն |
| Ուսման վարձը | 600 000 ՀՀ դրամ |
| Վերջնարդյունքը | Ա  Մասնագիտական գիտելիք և իմացություն<br>Ա1. Բնութագրելու ֆիզիկական դաստիարակության և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոլորտների հայեցակարգերը, կառավարման մեխանիզմները և հետազոտման ուղղությունները:<br>Ա2. Նկարագրելու ներառական կրթության համակարգում՝ ֆիզիկական դաստիարակության կազմակերպման և իրականացման ժամանակակից մոտեցումներն ու մեթոդները:<br>Ա3. Հիմնավորելու ֆիզիկական դաստիարակությունում և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայում կիրառվող հոգեբանամանկավարժական և բժշկակենսաբանական մեթոդները, միջոցները և սկզբունքները՝ տարանջատելով ոլորտներում առկա հիմնախնդիրները:<br>Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ<br>Բ1. Պլանավորելու մանկավարժական, գիտահետազոտական, կազմակերպչական, գործունեություն հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ անձանց տարիքային և անհատական զարգացման առանձնահատկությունները: |

| | |
|---|---|
| | Բ2. Իրականացնելու հետազոտություններ՝ ստացված արդյունքները վերլուծելով, գնահատելով, ներդնելով մասնագիտական գործընթաց:<br>Բ3. Կիրառելու ֆիզիկական դաստիարակության և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ոլորտներում կիրառվող հետազոտության մեթոդներն ու միջոցները մասնագիտության կարիքները գնահատելու համար:<br>Բ4. Վերլուծելու ոլորտում առկա հիմնախնդիրները՝ պատրաստելով հաշվետվություններ, զեկույցներ, հոդվածներ՝ ուղղված մասնագիտական գիտելիքների և պրակտիկայի զարգացմանը:<br>Բ5. Հետազոտելու և գնահատելու տարբեր տարիքային խմբերում ընդգրկված անձանց ֆիզիկական և ֆունկցիոնալ վիճակը՝ օգտագործելով ներառական կրթության համակարգում կիրառվող մանկավարժության նորագույն տեսությունների և ՏՀՏ-ների մեթոդները:<br>Բ6. Վերլուծելու և ընդհանրացնելու սեփական հետազոտական գործունեության արդյունքները և դրանց շուրջ անցկացնել  քննարկումներ, վարել բանավեճեր՝ դրսևորելով քննադատական մտածողություն:<br>Գ.  Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ<br>Գ1. Հաղորդակցվելու մայրենի և օտար լեզվով:<br>Գ2. Մշակելու և կիրառելու տեղական ու միջազգային գիտական, համացանցային աղբյուրներից ստացված հետազոտական տվյալները:<br>Գ3. Իրականացնելու անհատական և թիմային աշխատանք՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և ակադեմիական ազնվության նորմերը: |
| Աշխատաշուկան | Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան հետագայում աշխատել՝ հանրակրթական դպրոցներում՝ որպես ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, կրթական հաստատություններում և հարակից ոլորտներում: |